Ա. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

4311 ե.

ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԿԻՆՈ ԱՇԽԱՏԱՆՔ

ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ ԿԻՆՈՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԻ ՀԱՄԱՐ

ԴՅՈՒՂՀՐԱՏ 1934 ՅԵՐԵՎԱՆ

Ա. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

778.5
Կ-

ՄԱՍՍԱԺԱԿԱՆ ԿԻՆՈԱՇԽԱՏԱՆՔ

ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ՈՒՂԵՑՈՒՑՈՒՄ ԿԻՆՈՄԱՍՍԱԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԻ ՀԱՄԱՐ

Կ 246 Ա 1/3883

ՀՍՍՌ ԳԻՏ. I - Ն.Ա. ԱՆՎԱՆ
ԿԵՆՏՐՈՆԻԿՅԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2
ՄԿՏՀԳԻՄԻԱ

ԳՈՒՂՇՐԱՑ 1934 ԵՐԵՎԱՆ

Գլխ. խմբագիր՝
Դ. ԴՋՆՈՒՆԻ

Սրբագրիչ՝ Ա. Այվազյան
Հանձնվել է արտադրության 1934 թ. ապրիլի 27-ին,
Տառատպվել և տպագրվել 1934 թվ. մայիսի 18-ին
Գլավլիտ 8939, Տիրաժ 1500, Պատվեր № 318

ԵՐԵՎԱՆ, ՊՅՈՒՂՇՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ, ՆԱԼԱՆԴՅԱՆ 50

ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Կուլտուրական կինոյի կազմակերպումն և կինոյի շուրջը մասսայական, քաղաքատնտեսական աշխատանքների ծավալումն պրծնում մի կողմից՝ անհրաժեշտ փարձի բացակայությունը և մյուս կողմից՝ հայերեն լեզվով համապատասխան գրականության չունենալը։ Մեր առաջ հրամայական անհրաժեշտությամբ դրեցին կինո մասսայական աշխատանքներով զբաղվող կուլտուրական-լրագրողներին հաստատ լուսաբանել մի հանրամատչելի աղեցություն թյուրիմացությունից խուսափելու համար պիտի նշել, որ այս աշխատությունն արդիական չունի, այլ ամենի շատ իրենից ներկայացնում և այդ ուղղությամբ յնգած առաջին գրականության հանրամատչելի շարադրություն, հարմարեցրած Հայաստանի պայմաններին։

Ինչպես այդ՝ բանին, մենք համոզված ենք, որ բրոշյուրը բոլոր հնարավորություններն ունի ոգնելու կինո մասսայական աշխատանքներով զբաղվող ընկերներին իր գրական աշխատանքների ժամանակ։

Մի կողմից անհրաժեշտ փորձի կուտակումը և մյուս կողմից կինո մասսայինների արժեքավոր դիտողությունները բրոշյուրի թերությունների մասին՝ հնարավորություն կտան մեզ հետագայում վերամշակելու բրոշյուրը, վերացնելու մի շարք թերությունները և ամենի վերակյալ գործ տալու կինո մասսայական աշխատողին։

ՀԱՅԿ ԺԿԿ-ԻՑ կից կինո-ֆոտո
արդյունաբերության վարչություն

ԿԻՆՈՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԶՈՐ ՄԻՋՈՑ Է

Կինոն, որպես արվեստի մի ճյուղ, բացառիկ կարևորություն ունի հասարակական տնտեսական-քաղաքական կյանքը հիմնովին վերափոխելու գործավարության կինոն հզոր միջոց է ներգրավելու աշխատավորական լայն զանգվածներին դիտակցական, հոգևոր, գեղագիտական, քաղաքական աշխարհի վրա, նրանց մարքսիզմյան յենթարկելու սոցիալիստական շինարարության հրատապ խնդիրները լուծելու շուրջը Հենց այդ պատճառով էլ ընկ. Լենինն ասել է, որ «արվեստի բոլոր ճյուղերից մեզ համար ամենակարևորն իմ կարծիքով՝ կինոն է»։

Մեծագույն հաջողություններ են ձեռք բերված սոցիալիզմի համար մղվող պայքարը կինոյի միջոցով վերազատագրելու գործում։ Սակայն կինոյի պրոլետարական քաղաքականությունն է—մատչելի ձևով լայն աշխատավորական մասսաներին հասցնել նրանց հուզող խնդիրները, սոցիալիստական շինարարության խնդիրները ինքնատիպ շաղկապելով մասսաների կինո ապատարկման գործի հետ և այդ միջոցով կինոն դարձնել սոցիալիստական պլանների կատարման հզորագույն միջոցներից մեկը։ Կինոյի շուրջը տարվող մասսայական-քաղաքական աշխատանքները հանդիսանում են այն կարևորագույն հատկությունը, որով Մոսկվայինը կինոնամասսրատիկան տարբերվում է բուրժուական կինոյից։

Ներկայումս կինոն չի կարող միայն կինո-նկարների ցուցադրման վայր լինել։ «Կինոն պիտի լինի պրոլետարիատի գործիքը մյուս դասակարգերի վրա իր հեգեմոնիայի ղեկավարությամբ և ազդեցության համար մղվող պայքարում, կուսակցության ձեռքում նա պիտի հանդիսանա կոմունիստական լուսավորության և ագիտացիայի հզորագույն միջոցը»— ասված է Համ. Կ. (բ) Կ. ԻՁ-րդ համագումարի բանաձևում։ Այնուհետև կինոյի խնդիրը կայանում է այն բանում, որ նա ապահովի սոցիալիզմի շինարարների՝ բանվորների և կոլտնտեսականների ձգտումը կինոյից ստանալու հաճույք, հանգիստ, իր կուլտուրական, քաղաքական մակարդակի բարձրացումը (Համ. Կ. Կ-ի գեկտեմբերյան պլենումի բանաձևից)։

Կինոն պիտի լինի պրոլետարական և աշխատավորական մասսաների կուլտուրական հանգստի գեղարվեստական սպասարկումը, նրանց սոցիալիստական վերադաստիարակման և քաղաքական լուսավորական աշխատանքների հետ խնայողությունն շաղկապելու կուլտուրական ոգեկոչը։ Հենց այդ աշխատանքների վրա է, որ մինչև այժմ պատշաճ ուշադրություն չենք դարձրել։ Ոչ միայն կինո կազմակերպությունները, այլև շատ շրջանային կազմակերպություններ։

Չնայած այն խոշոր նշանակությանն ու դերին, որ ունի կինոն սոցիալիզմի կառուցման և դասակարգերի լիկվիդացիայի գործում, նա դեռևս չի արժանացել մեր մի շարք շրջանային կազմակերպությունների պատշաճ ուշադրությանը։

Հաճախ, յուրաքանչյուր կատարվում և այս կամ այն նկարի սակ ցուցադրումը, կինոն սպասարկումն ամբողջապես ապահովված է համարվում։ Ցերբենն վարող աշխատողները միանգամայն սխալ են պատկերացնում մեր

խնդիրները կուլտուրական շինարարության բնագավառում և միանգամայն անթույլատրելիորեն թերագնահատում են կուլտուրական հեղափոխության խնդիրները, այդպիսին կոպիտ կերպով անջատելով սոցիալիստական շինարարության ընդհանուր գործից։ Անկասկած յուրաքանչյուր կոմունիստ, կուսակցիկ, հարմարեցնելու պիտի յուրացնեն պայքար մղի կուսակցության առաջադրած պլանների կատարման համար, բայց խնդիրն այն է, որ կուսակցությունը սոցիալիզմի կառուցման կարևորագույն հանգամանքից մեկը միշտ համարել և համարում է կուլտուրական հեղափոխությունը։ Դրանում համոզվելու համար մեջ բերենք ընդ. Լենինի հետևյալ խոսքերը.

«Մեզ համար բավական է այժմ կուլտուրական հեղափոխություն, վերանցի դառնանք ամբողջապես սոցիալիստական շինարարս։

Իսկ կուլտուրական հեղափոխության կարևորագույն պահը կլինեն և, որպես ասենք պատշաճ գնահատության չենք արժանանում։

Նման արտահայտությունների պրդյունք և նման այն, որ ինչպես ժլինարարները, նույնպես և գյուղական ու շրջանային շատ կազմակերպություններ, անթույլատրելի կերպով թերագնահատում են կլինեն նկարի շուրջը ծավալվելիք մասսայական-քաղաքական աշխատանքները։ Դեռ ավելին։ Այդ բնագավառում—շատ շրջաններում—անգամ առաջին քայլերը չեն արված։ Կլինեմասսայական աշխատանքը թողնում են միայն մեկանգիկի վրա։ Այդ գործին չեն լծվում գյուղի կուլտուրական ուժերը։

ՃԱՆԱՉԵԼ, ՇՐՋԱՆԸ, ՏԱԼ, ՆՐԱՆ ՎՈՐԱԿՑԱԼ ՈՒԵՊԵՐՏՈՒԹՅՈՒՆ

Ամենապրիմիտիվ և անթույլատրելի բացը կլինեն ապատարկման բնագավառում այն է, որ մենք չու-

նենք մինչև այժմ ճշտված համապատասխան ռեպերտուարը, որի հետևանքով գյուղի և քաղաքի կինոսպասարկումը չի շաղկապվում անցկացվող տնտեսական-քաղաքական կամպանիաներին։ Որինակ՝ շատ հանախ գարնանացանի վերաբերյալ նկարը գյուղ և մտնում բերքատվության յուռուն շրջանում, կամ բամբակացան շրջաններին են ուղարկվում ծխախոտագործության վերաբերող ագրոֆիլմ և ընդհակառակը։ Սա արդյունք և այն բանի, որ շատ կինո-աշխատողներ (հատկապես պրոկատի գծով) բավարար պատկերացում չունեն տվյալ շրջանի եկոնոմիկայի, կուլտուրական-քաղաքական կյանքի մասին, չգիտեն բնակչության կենցաղը, սովորությունները, մոտիկ անցյալի պատկերը և այլն։

Այդ միանգամայն անհնարավոր դրությանը վերջ տալու համար, անհրաժեշտ է, որպեսզի կինո աշխատողը, հատկապես կինո-մեխանիկը, լրիվ պատկերացնի տվյալ շրջանի տնտեսական-քաղաքական-կենցաղային պատկերը։ յուրաքանչյուր նա ուզում և իր մասնագիտական-քաղաքական աշխատանքները դնի իրական հողի վրա, նա պետք է նկարի բովանդակության համապատասխան փաստական նյութեր վերցնի տվյալ շրջանի կամ գյուղի իրական կյանքից։

Այդ նպատակով միանգամայն անհրաժեշտ է ունենալ յուրաքանչյուր շրջանի պասպորտ-անցագիրը, որում փաստական տվյալներով պետք է ցույց տրվեն հետևյալ տեղեկությունները՝

1. Սպասարկվող կետերը, կետերի աշխարհագրական դիրքը, նրանց մինչև տարածությունը, կապի և հաղորդակցության մեջոցները, ազգաբնակության կազմը (դասակարգային, ազգային, կուլտուրական, տնտեսական)։

2. Ինակցության դրդումները (անանձնականություն, դաշտավարություն, արդյունաբերություն-մշակող կոլեկտիվներ, նրանց տնտեսական կյանքը և այլն)։

3. Երկրների պատմական տնտեսական համառոտ ուրվագիծը, ուր պետք է հիշատակվի քաղաքորդ դարից սկսած պատմական դեպքերը, այն է՝ մասնակցությունը հեղափոխական շարժումներին, խորհրդայնացման եռապայքարը, պայքարը դաշնակցության դեմ, ազգայնական և կրոնական կազմակերպությունների դեմը, երկրների տնտեսական զարգացման հեռանկարները. 2-րդ հնգամյակի նախագծումները—կիրառումը, կոլեկտիվացման հաջողությունները և այլն։

4. Կոլեկտիվական անձան համառոտ ուրվագիծը—գործարանների, հիմնարկների, քաղաքային հիմնարկների թիվը, գրագիտության տոկոսը և այլ տվյալներ։

Անհրաժեշտ տվյալներ կենցաղի, առողջության, կրոնական գոյությանների, հակակրոնական շարժման, խորհրդային, կուսակցական և այլ կազմակերպությունների կառուցվածքի և այլնի մասին։

Անցյալի կարևոր քաղաքական նշանակություններ յուրացնելով, անհրաժեշտ է այդպիսին կազմելու աշխատանքներին մասնակից դարձնել ոչ միայն կինոաշխատողներին, այլև շրջանի կուսակցական, կոմերիտական և խորհրդային կազմակերպություններին։

Այդպիսի անցյալը լիակատար հնարավորություն է տալիս յուրաքանչյուր կինոաշխատողին կազմակերպվելու միջավայրին համապատասխան, ճիշտ կերպով նախագծելու և պլանավորելու տվյալ շրջանի կինոսպասարկումը և քաղաքային մասնայական աշխատանքների կազմակերպումը։

Կինոսպասարկումը և մասնայական քաղաքական աշխատանքները ժապավենի շուրջը, մեզ համար

ինքնանպատակ չինն։ Այդ աշխատանքների նպատակը պիտի լինի՝ 1. նկարը դյուրըմբռնելի դարձնել դիտողի համար, 2. մասսայի ուշադրությունը սրել սոցիալիստական շինարարության հրատապ խնդիրների վրա, 3. նկարի բովանդակությանը համապատասխանող տեղական նյութերն ոգտագործել՝ պայքարելու զանազան բացասական յերևույթների, սովորույթների, հասարակական չարիքների դեմ (հարբեցողություն, կրոնամոլություն, անկազմակերպվածություն, պրոգուլներ և այլն), 4. բարձրացնել աշխատավորության հեղափոխական ղգոնությունը, խորացնել այդ մասսայի մեջ դասակարգային առեղությունը ժողովրդի թշնամիների՝ կուլակ-դաշնակցական տարրերի նկատմամբ, 5. բարձրացնել աշխատավորության կուլտուրական մակարդակը։ Սովորեցնել նրանց նոր ձևով աշխատելու, յուրացնելու 1-ին հնգամյակի կենսագործման հեռանքով ստեղծված նոր արտադրությունը և նոր տեխնիկան, և այլն։ Իսկ այդ գործում խոշոր չափով կարող է ոժանդակության գալ կազմված անցագիրը։ Անցագիրը հնարավոր լինի կինո մասսայական աշխատանքները սերտորեն շաղկապել տվյալ շրջանի տնտեսական-կուլտուրական շինարարության կոնկրետ խնդիրների հետ և ճշտորեն իրագործել կինո մասսայական աշխատանքների վերևում նշված հիմնական նպատակադրությունները, խիստ կանոնավոր է անցագիրը լրացնել նոր ինստատական մատերիալներով՝ վերցրած տվյալ շրջանի տնտեսական-քաղաքական կյանքից և այլն։

Անցագիրը չափազանց ոգտակար կլինի կինո աշխատողի-մասսայինի համար, իր մասսայական-քաղաքական աշխատանքները կազմակերպելու այն հաշվով, վորպեսզի լուծում տա դիտողին հուզող, նրան հետաքրքրող զանազան հարցերին։ Այդ իսկ պատճա-

ռով մասնավորապես ամբողջ խնդիրը պիտի լինի իր աշխատանքները կազմակերպել այն հաշվով, որպեսզի աշխատավորը զբաղվի միայն գործարանում, հարդուրդ առ իր կուլտուրական, գեղագիտական պահանջներին, այլև ստանա իր վաղվա աշխատանքների ծրագիրը՝ գաղտնում կամ գործարանում։

ԼԻՆԵՆԻ ՄԱՍՍԱՎԻԿՆԵՐ ՅԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐ

Նկարի ցուցադրումը կարելի է կազմակերպել զանազան միջոցներով ու ձևերով։ Կարելի է որինակ՝ նախապես կազմակերպել գրույց՝ նկարում շոշափվող հարցերի շուրջը, կամ այդ հարցերը փոքրիկ հոդվածով կարելի է լուսաբանել տեղական պատի լրագրում։ Կամ առաջիկա կենտրոնական վերաբերյալ կարելի է կազմակերպել մեծ նկարների և այլ նյութերի ցուցահանդես, ինչպես և աչքի ընկնող վայրում կախ տալ պատկերազարդ տեղեկատվություն, վերցնել նկարի բովանդակության համապատասխանող լոզունգներ և այլն։

Դրա հետ միասին զանազան ձևով ի կատարվում նկարի ցուցադրումը։ Մի դեպքում ուղղակի բավականանում են նկարի տակ ցուցադրումով, որը միանգամայն անբավարար ձև է, առանձնապես գյուղական շրջաններում, ուր կուլտուրական փոքր հետաքրքրություն և ուսանելիություն չարթնացնելու հնարավորությամբ հաճախ անտեսանելի է դառնում նկարի բովանդակությունը։

Ուրիշ դեպքում ցուցադրման միջոցին կարդացվում են մակագրությունները, բացատրվում առանձին մասերը, կազմակերպվում են գրույց, ցուցահանդես և այլն։

Այդ բոլորը մի ավելորդ անգամ ապացուցում են, որ կինը աշխատողին՝ սկսած կինը մեքենիկից, մեծ պահանջներ են առաջադրվում, և որ նա անպայմանորեն պետք է նախապատրաստվի կատարելու այդ պահանջները։ Այլ կերպ ասած, կինը-աշխատողի և կինը-մեքենիկի աշխատանքը չպետք է սահմանափակվի միայն կինը-ապարատը գործի դնելով. դա նրա աշխատանքի մի մասը, այն էլ ոչ ամենակարևոր մասն է կազմում։ Կինը աշխատողը պետք է միաժամանակ մասսայական-քաղաքական աշխատող լինի, որ նրա աշխատանքների կարևորագույն մասը կազմի մասսայական-քաղաքական, դաստիարակչական աշխատանքները։ առանց դրա չի կարող հնարավոր չլինի կինոն դարձնել սոցիալիզմը կառուցող միլիոնավոր մասսաների կոմունիստական դաստիարակության հզոր միջոց։

Բնական է, որ ամբողջ կազմակերպչական, մասսայական աշխատանքները, որոնք քանի գնում ավելի կարևոր նշանակություն են ստանում, չեն կարող կատարվել միմիայն կինոն աշխատողների միջոցով։ Այդ իսկ պատճառով միանգամայն անհրաժեշտ պետք համարել շատ շրջանային ու գյուղական կազմակերպությունների առանձին ընկերների անտարբեր վերաբերմունքը դեպի կինոն մասսայական աշխատանքները։

Կինոն մասսայական աշխատանքների կազմակերպման և ղեկավարման գործն ամբողջապես պետք է իրենց ձեռքը վերցնեն շրջանային, կուսակցական, կոմերիտ միության կոմիտեների կուլտպրոպները և ՄՏԿ քաղբաժինները։ Նրանք անպայմանորեն պետք է իրենք կինոն աշխատողի հետ միասին կազմեն այս կամ այն կինոնկարի շուրջը կազմակերպվելիք մասսայական աշխատանքների պլանը, տրամադրեն համապատաս-

[illegible] կազմելը այդ աշխատանքների կատարման համար, կատարելու աշխատանքի բաժանում և այլն, և այլն։

Անհրաժեշտ է այդ աշխատանքներում անպայման անհրաժեշտ և բացառիկ նշանակություն տալ, կուլտ բանակային ստորաբաժանումներին, քաղաքացի աշխատողներին, (կոլխոզային ակտիվին, կարմիր բանակի վարիչներին, կուլտ կազմակերպիչ ընկերներին), գյուղատնտեսներին, բժիշկներին և այլն։ Դեռ ավելին՝ կոլխոզ ակտիվները քաղաքացի աշխատանքների մեջ անպայման դրդիչ ուժ պետք է լինեն մասնակցելու աշխատանքներին։ Նա անպայման պետք է ունենա այդ աշխատանքների պլանը՝ հատուկացնելով շրջանային կոմկոմի, ՄՏԿ քաղաքացի և կինոաշխատողի հետ։ Մասնակցելու աշխատանքների մեջ անպայման անհրաժեշտ է ներգրավել նաև կոլտնտեսային ակտիվը, կոմսոմոլին, կին կազմակերպությունը և այլն։

Այդ աշխատանքների ամբողջ հաջողությունը կապ ունի նաև կինոաշխատանքների պլանավորման հետ։ Մինչև հիմա *ոչ միայն մեր շրջանային կինոաշխատողները, կինոդպրոցները, այլև Հայկինոն չունեն մշակված հստակություն ինչպիսի՞ և շրջաններին նկարներով ապահովելու գործը մատնված և հանախ պատահականություն։ Անհրաժեշտ է արմատական փոխել այս դրությունը։

Աշխատանքի պլանավորման հետ միասին գյուղական, կոլխոզային կազմակերպությունները, կինոաշխատողները պետք կատարեն նաև անհրաժեշտ կազմակերպչական աշխատանք։

Անհրաժեշտ է յուրաքանչյուր գյուղում առանձնացնել առանձին ձևաններից ընկերներ, նրանց վրա դնել կինոմասսայական աշխատանքների կատարման պատասխանատվությունը, նրանց կարողություններին հա-

մապատասխան։ Որինակ, մեկին՝ կարելի է հանձնարարել լոգունգների և ալիշանների գրելը, մյուսին՝ կոլխոզային բրիգադաներում նկարի շուրջը գրուցներ հաստատելը, 3-ին՝ պատի լրագրում հոդված գրելը, 4-ին՝ կոլխոզի կյանքից նկարի բովանդակությանը համապատասխանող նյութերի հավաքումը, 5-ին՝ նկարի բացատրությունը և վերջում կարծիքների ամփոփումը և այլն։ Առանձնացված ընկերներից հիմնադրվում է կինո սիրողների, կամ կինո մասսավիկների խմբակ, որոնց դեկավարությունը պիտի դառնվի կինոբաղանների ձեռքին։ Այդ խմբակների հետ վերջինս պիտի կատարի անհրաժեշտ աշխատանք (սեմինարներ, կինո սեանսի, դիտումի միատեղ կազմակերպում և այլն)։ Ուր այդպիսի խմբակ հնարավոր չի կազմակերպել, անհրաժեշտ է առանձնացնել կինո լիազոր։

Կինո սիրողների խմբակի և լիազորի հիմնական ֆունկցիան պիտի լինի մասսայական աշխատանքի կազմակերպումը։ Նրանք պիտի նախապատրաստեն առաջիկա սեանսը, մասսայի ուշադրությունը բևեռեն ցուցադրվելիք նկարի վրա, նկարը շրջապատեն տեղական նյութով, կազմակերպեն գրույց, դեկլուցում, ցուցահանդես, լրագրային աշխատանք և այլն։ Ակտիվը պիտի լայն ոմանդակություն ցույց տա կոլխոզների և այլ կազմակերպությունների հետ պայմանագրի կնքմանը գործում, նյութեր պատրաստի լուսաթերթի համար, կամ լույս ընծայի այդպիսին և այլն։ Կինո սիրողների խմբակը և լիազորը մշտական կապ են պահպանում կինո բազմաթերի կամ մեխանիկի հետ և տեղյակ են պահում գյուղացիներին առաջիկա կինո սեանսի մասին՝ իրենց կատարելիք մասսայական աշխատանքների մի ցուցակ։ Կինո աշխատողը պարտավոր է կինո սիրող-

ներին, կամ լիազորին վարձատրությունը համապատասխանորեն ձա-
ռայի պահել նկարի բովանդակության ձևավորվելիք մասնակցական աշխատանքների ձևերի մասին, վերջինս
ներառն ուղարկվում է նկարի հետ միասին (լիբրետո)։

Ամբողջը, լիազորը կամ կինո աշխատողը անպայման պարտավոր են համախմբի կինոնամանց հետ կատարել դիտողների կարծիքների հաշվառում։ Ներառնք պիտի կարողանան նաև նկարների մասնակցական քննադատություն, մասնակի դիտողությունները, պահանջները և կարծիքները գրի առնեն, ուղարկեն կինոկազմակերպությունների և թերթերին՝ հրատարակելու նպատակով։

Կինոաշխատանքներին չափազանց խանգարում է այն միջնադարյան անհասկանալի կարծիքը, որը կա շատ դյուրավան և շրջանային աշխատողների մեջ, (ինչպես նշում է Համ Կոմիկուսի Գեներալը իր մայիսի 7-ի հրամանում), ըստ որի ցրտի կինոապարատը դիտվում է միայն ձրի և բարիդրծական մի դրծ, որն արժանի չի հրաման ուշադրության կամ ոժանդակության։ Ինչպես կինոաշխատողների, նույնպես և կինոսիրողների ձևավորվելիք աշխատանքների հաջողությունը կախված է այն քանից, թե որքանով հաջողությամբ կհաղթահարվեն այդ հասարակաց արատությունները և այն մասամբը կհամախմբեն կինոյի շուրջը։

ԿԻՆՈ-ՍԵԱՆՍԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԻՄԸ

Այժմ անցնենք կինոմասնակցական աշխատանքների առանձին ձևերի լուսաբանմանը։ Կինոսեանսի նախապատրաստման աշխատանքները սովորաբար սկսվում են հայցարարության-ագիտացիայից։ Սակայն մինչ-

չնչ այժմ ամբիշանները գերազանցապես հայտարարության ընույթ են ունեցել. մինչդեռ ամբիշան պիտի նպատակ ունենա նախապատրաստելու դիտող հասարակությանն առաջիկա կինո սնանելի համար, իր բովանդակությամբ շարժի այդ հասարակության հետաքրքրությունը և նրանց ուշադրությունը սրի այն հանդուցային խնդիրների վրա, որոնք շոշափվում են նկարում։ Նախապատրաստված դիտողը բնականորեն լարված հետաքրքրությամբ դիտելով նկարը, ի վիճակի կլինի նաև ամբողջական պատկերացում ունենալ նրա մասին և գտնելու իրեն հուզող հարցերի լուծումը։ Այդ իսկ պատճառով կինո-մասնագիտական աշխատանքի կազմակերպիչը պիտի վերջ տա ամբիշանների շաբլոն ձևին և նկարի ռեկլամացիան դնի այն հաշվով, որ արտահայտի նկարի հանդուցային խնդիրները և շարժի մասսայի հետաքրքրությունը։ Որինակ՝ «Ծաք արյունն» նկարի ռեկլամները կարելի էր գրել հետևյալ կերպ. «Եթե ուզում եք իմանալ ինչպիսի մարդիկ և պատրաստում կարմիր բանակը, արի կինո, դիտիր «Ծաք արյունն» նկարը. կամ «Եթե ուզում եք իմանալ ինչ և տալիս կազմակերպված կոլեկտիվ տնտեսությունը գյուղացուն, արի կինո, դիտիր «Ցերկրորդ քայլ» նկարը. բացատրական աշխատանքները և հարցերի պատասխանը կտա այս ինչ ընկերը»։ Դամ թեկուզ վերցնենք «Մարդ և կապիկ» նկարը, որը չափազանց հարմար նկար և հակակրոնական ագիտացիայի համար, այդ նկարի ռեկլամը կարելի էր գրել այսպես՝ «Եթե ուզում եք իմանալ վորտեղից և առաջացել մարդը, շտապիր կինո, դիտիր «Մարդ և կապիկ» նկարը։ Մարդու ծագման մասին խոսելու էր (ազգանուն), վերջում լինելու էր հարց ու պատասխանի յերեկո, վիկտորինա, պարզնատրուժ և այլն։

Ամեն կերպ պետք է աշխատել նկարի բովանդակությանը համապատասխանող տեղական յերևույթներ յուրացնել ռեկլամայում, զուգակցել տեղական խնդիրների հետ, որպես նոր կապ ստեղծելով նկարի բովանդակության և տեղական խնդիրների միջև։ Որինակ՝ «Անապատի մարդաբիտը» նկարը համապատասխանում է մեր ամբողջ ջրոնցքային շինարարությանը և վառոդյան աշխատանքներին, հետևապես նկարի յուրացումն ռեկլաման կարելի յե գրել այսպես. «Ջրոնցքային շինարարությունը յերկրին տալիս է անհայտ հարստություն. այդ բանում համոզվելու համար ունցիր կինոն, և նայիր «Անապատի մարդաբիտը» և տես։ Ամեն մի աշխատող պիտի յերկրի քարված որինակներից և սեփական հարստանալությամբ կազմի ամբիոն-ռեկլամա նկարի բովանդակությանը և արծարծվող խնդիրներին ու ոչ միայն վայրի յուրահատկություններին համապատասխան։

Կինոն լինելով կամ կուլտ բանակայինը միաժամանակ պետք է վատերքը կոլխոզ ըրիգադներում կազմակերպի թատրոնի դերում՝ առաջիկա կինոն սեանսի մասին, ունկնդիր հավաքի կոլտնտեսականների դիտողություններն ու առաջարկությունները ցուցադրումների, մասսայական աշխատանքների մասին։

Նույն հոգատարությամբ ունկոյմանն պետք է լայնորեն ազատագրել ռադիոն, ակուժքը, մոտուլը։

Այդ աշխատանքների միջոցին կինոն աշխատողն անմիջական շփման մեջ է մտնելու կենդանի մարդկանց հետ, որոնք իրենց պահանջներով, հուշերով բարկան մասնակցությամբ, տնտեսական պայմաններով ու կենցաղով մեր խորհրդային պատկերն են ներկայացնում բնական և, նրանցից, յուրաքանչյուրը տարբեր վերաբերմունք և ցուցաբերելու, ինչպես դեպի նկարը,

ԳՐԱԴԱՐԱՆ № 2

նույնպես և դեպի մասսայական աշխատանքները։ Մասսայական աշխատանքների հոլով վարձանը դրա համար ել կարվում է նաև առաջնորդության կազմից։ Այդ իսկ պատճառով հինգ աշխատողը պիտի լինեն կենդանի ուսումնական, ճանաչի առաջնորդիան, կապակցություններին հետ մեկ տեղ ստեղծի կազմակերպված դիտողների առաջնորդիա և մասսայական աշխատանքները ձևավորելիս հաշվի առնի դիտողների պատրաստականության մինչև մակարդակը։ Ինկլյամային գաղափարից անհրաժեշտ է կազմակերպել քիչգուրային պլակատների, ֆոտո նկարների ցուցահանդեսներ նկարի բովանդակությունը պահանջում է, կարելի է ֆոտո նկարները վերցնել նաև ավյալ գյուղի կյանքից և դնել ցուցահանդեսում և այլն։

ՑՈՒՑԱԴՐՄԱՆ ՍԿԶԲԻՆ ՏԱՐՎԵԼԻՔ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքներից հետո կարևորագույն նշանակություն ունի սեանսից (ցուցադրումից) առաջ տարվելիք մասսայական աշխատանքները, որոնք նպատակը պիտի լինեն առաջին հերթին ոգնելու դիտողին յուրացնելու, հասկանալու նկարում շոշափվող խնդիրները և նրանց լուծումը և ապա համապատասխան հետևություններ կատարելու։ Հ-ով՝ նկարին համապատասխան նյութի լուսաբանմամբ մոբիլիզացիայի յենթարկել դիտողին, ավյալ վայրի հիմնական տնտեսական-քաղաքական խնդիրների շուրջը, բարձրացնել նրա ակտիվությունն այդ խնդիրների լուծման գործում։ Նկարի բովանդակությունը դիտողին դյուրըմբռնելի դարձնելու վրա անհրաժեշտ և լուրջ ուշադրություն դարձնել, որովհետև անվարժ դիտողը, հաճախ, ի վիճակի չի հետևվելու դեպքերի զարգացման ընթացքին, ըմբռնելու նկարի բովանդակությունը։

Այժմ տանք սրանից առաջ տարվող մասսայական աշխատանքների մի քանի ձևերը։ Սահմանափակվել և մասսայական գործունեության ասացած ձևը դա ցուցադրությունից առաջ տրվող համառոտ զեկուցումն է կամ դրությունը (10—15 րոպեից մինչև ավելի)։ Բնականորեն զեկուցման կամ դրության բովանդակությունը կազմվում ցուցադրվող նյութերը և նրանց համապատասխան տեղական փաստերի լուսաբանումը։ Դիտի մասսայական աշխատանքների կազմակերպման սկզբունքը պիտի լինի առաջին հերթին նկարի բովանդակությունը։ Այնուհետև, յուրաքանչյուր, որպես ամբողջություն առնելիս մի ընդամենը լուսաբանել տեղական փաստերը, ինքնուրույնաբար, ապա պիտի կատարել այդպիսի շարադրում։

Ընդհանրապես, վար ցուցադրվում և ամառ Փուշկ հերկարը։ Զեկուցողը պիտք է համառում ներկայացնի տա Պարկատանի դասակարգային հարաբերությունների պատմությունը, խոշորագույնի պայքարի ձևերը՝ առանձնապես, մոլանների դեմ, կրոնական նախապաշարմունքների դեմ այդ պայքարում, ուսանող և անդրանիկ իմպերիալիզմի մերձեցությունները Պարկատանի անդրանիկությունից և հետամնացությունից ոգտվելու գործում, աշխատավորությունը շահագործելու համար և այլն։ Դրա հետ միասին զեկուցողը պիտի տա հեղափոխական մասսաների հաղթանակի նախապայմանը շահագործողների դեմ։ Զեկուցումը հիմնականում պիտի հնարավորի դիտողին տալու պրոլետարիատի և ամբողջ աշխատավորության պայքարի միասնական նպատակը, նրա արմատները և կենսագործման ուղիները։

Բացատրական աշխատանքն այդպիսով պիտք է ցույց տա և առաջ հիմքի բովանդակությունից, լուսաբանելն նկարում արծարծվող հանգուցային խնդիրները և անբաժան շաղկապելով պրոլետարիատի դասակար-

գային պայքարի նպատակներին, մասսաներին մոբիլիզացիայի յենթարկի այդ խնդիրների կենսագործման շուրջը։

Որինակ, սոցիալիզմի շինարարության, յերկրի ինդուստրացման, գյուղի կոլեկտիվացման վերաբերյալ նկարների բացատրականը պետք է կատարվի այնպես, որ կարողանա բարձրացնել մասսաների դասակարգային զգոնությունը, աշխատանքային խանդավառությունը, հանրային գույքի պաշտպանման, աշխատանքի կազմակերպվածության, արտադրողականության բարձրացման, նոր տեխնիկայի յուրացման, կուլակային տարրերի և նրանց վնասարարական գործունեությունը չափազանցելու, կարճ ասած—անդամակարգ սոցիալիստական հասարակարգ կառուցելու շուրջը։

Նկարի շուրջը ցուցադրման սկզբին կազմակերպվող մասսայական աշխատանքները չեն սպառվում զեկուցումներով և զրույցներով։ Ելնելով նկարի բովանդակությունից և դիտողների զարգացման մակարդակից, միանգամայն անհրաժեշտ է կազմակերպել քաղ-մարտ, ազրոմարտ, վիկտորինա, ցուցահանդես, թռուցիկ միտինգներ և այլն, լայնորեն ոգտագործելով տվյալ գյուղի, շրջանի կյանքից վերցրած մատերիալները։

Որինակ՝ «Զամալլուս», «Ազդանշանը չի լռի» և այլ հեղափոխական-պատմական նկարների շուրջը կարելի յե կազմակերպել քաղ-մարտ՝ լուսաբանելու նկարում շոշափված գեպքերը, Հայաստանի հեղափոխական շարժման նատպները, տվյալ շրջանում, գյուղում տեղի ունեցած դասակարգային կռվի ձևերն ու եղանակները և այլն։ Առաջարկվող հարցերը պիտի լինեն պարզ ու դյուրըմբռնելի։

Եթե ցուցադրվում է տնտեսության այս կամ այն ճյուղի վերակառուցմանը վերաբերվող նկար, ան-

հրաժեշտ և այդ դեպքում կազմակերպել տեխնիկական մասում, լուսաբանել մեխանիկական, տեխնիկական վերակառուցման խնդիրները ու ուղիները, կուսակցության պայքարը մեխանիզացիայի տեխնիկական վերակառուցման համար, տեխնիկային տիրապետելու կարևորությունը, այդ աշխատանքների դրվածքը տվյալ ձեռնարկում, գյուղում, կոլխոզում և այլն։

Հարմարությունը դնկավարելու՝ գործը բազմակողմանի պատասխանատու և գծելորին խնդիր է։ Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է այդ գործը վարպետորեն հանձնարարել պատրաստված ընկերոջ։ Սեռանի սկզբում կազմակերպիչը տիպի մի քանի լոզունգով հանիրա հաղորդի նկարի բովանդակությունը և նրա նշանակությունը, որից հետո նա հանդիսականներին տանջարկում է նախապես մշակված մի շարք հարցեր, բղխեցրած նկարի բովանդակությունից, տվյալ վայրի պրակտիկայից և այլն։

Որքանով՝ գաղտնավարության վերաբերվող նկարի շուրջը կարելի է, ասել այսպիսի հարց.—«Ինչպիսի միջոցառումներ են հարկավոր բերքատվությունը բարձրացնելու համար։ Էորձնք են ընկ. ՑԱԿՈՎԼԵՎԻ կողմից առաջադրված բերքատվության բարձրացման 5 նախապայմանները։ «Ինչպես կարելի է ունենալ դարձնել կոլտնտեսականներին։ Բոլոր պատասխանները համառոտակի գրի են առնվում։ Գրվում է նաև պատասխանողի ազգանունը։ Սեռանի վերջում 10—15 րոպեում ամփոփվում և քաղվածքի արդյունքները, նշում են ճիշտ պատասխանները և ապա համառոտակի տալիս տվյալ գյուղում, կոլխոզում տարվելիք աշխատանքների պատկերը։ Ճիշտ պատասխանող ընկերներն ստանում են համապատասխան նվերներ—գերազանցապես գրականություն։

Սեռական սկզբին առաջիկ մասնավորական աշխատանքների ամենաբարդագույն և արդյունավետ ձևը՝ ցուցահանդեսն է։ Ցուցահանդեսի ներգործությունը դիտվում էր հասնելատարածք ավելի զորեղ և, բացամիտորեն։ Ցուցահանդեսի նպատակը պիտի լինի ծանոթացնել մասսային տվյալ ուղղին, գյուղի նոր-ք բնական նպատակներին՝ սոցիալիստական շինարարության գանագան բնագավառներում։ Ցուցահանդեսի միջոցով անպայման պետք է լուսաբանվի տվյալ վայրի աշխատանքների թերությունները, աշխատանքների կազմակերպման վիճակը, սոցմրցակցության և հոբվածայնության վիճակը, հանրային գույքի պահպանության հնարները, նրա թշնամիները և այլն։ Ցուցահանդեսի հետևանք նյութ կարող է ծառայել նաև յերկու սիստեմների տնտեսական-քաղաքական կյանքին վերաբերվող տվյալների համեմատությունը՝ պլակատային դիագրամների ձևով և այլն։

Ցուցահանդեսի կազմակերպման դեպքում անպայմանորեն անհրաժեշտ է լուսաբանել տվյալ վայրի, շրջանի տնտեսական-քաղաքական, կուլտուրական պատմությունը նախահեղափոխական շրջանում, վորովհետև այդպիսի համեմատությունները ավելի արտահայտիչ են դարձնում մեր հաջողությունները։ Ցուցահանդեսը կազմակերպելիս անհրաժեշտ է նրան այնպիսի ձև տալ, վոր հնարավոր լինի ոգտագործել շրջանի միջոցով։

Ցուցահանդեսն անհրաժեշտ է բաժանել յերեք մասի. որինակ՝ Հայաստանի խորհրդայնացման առթիվ կազմակերպվելիք ցուցահանդեսը կարելի յե կազմակերպել հետևյալ սխեմայով.—1. Հայաստանը մինչև նոյեմբերյան հեղափոխությունը, 2. Հայաստանը շրջանառության դիկտատուրայի որոք—մինչև ցուցահանդեսի որը, 3. սոցիալիստական շինարարության առա-

չնկա խնդիրները։ Այդ բաժիններն անհրաժեշտ է վերանել մասամբ հետևյալ յենթաբաժիններից.—

1. Արդյունաբերություն, 2. գյուղատնտեսություն (նաև անասնապահություն), 3. կուլտուրա, կենցաղ և այլն։ Սրանք բոլոր հնարքին կարելի յե հրաժարվել այսպես՝ 1) արդյունաբերություն—ա) ծանր արդյունաբերություն, բ) նիկոբրիգիկացիա, գ) թեթև արդյունաբերություն և այլն։ «Սոցշինարարության առաջիկա խնդիրներում բաժանում անհրաժեշտ է բայց չափով ոգտագործել տեղական կոնկրետ մատերիալը։

Այդ նպատակով տալիս ենք հետևյալ սխեման.—

ՀԱՏԱՍՏԱՆԻ Ս. Խ. Հ.

1-ին ԲԱԺԻՆ։—Այսպիսին եր ցարի յեվ պատճառների դեմ։

1. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ.

ա) ծանր արդյունաբերություն (ոգնաարդյունաբերություն, այսպես տրանսպորտը, հետաքրքիր տեխնիկա, մեքենաշինություն չկար).

բ) նիկոբրիգիկացիա—դրեթե չկար.

գ) թեթև արդյունաբերություն—մի քանի արհեստագործական ձեռնարկներ, որոնք զարգացել եյին գրքերից՝ ազգամիջյան կրիզիսների հետևանքով.

դ) տրանսպորտ՝ քայքայված (բանվորների թիվը)։

2. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ.— (արտադրանքը—ցանքերի տարածությունը, անասնապահությունը, տեխնիկական կուլտուրաները, արտադրության միջոցները, հողային հարաբերությունները, գյուղի դասակարգային դիմքը։

3. ԿՈՒԼՏՈՒՐԱ ՑԵՎ ԿԵՆՑԱՂ.

Անգրագետ մասսաներ, որոնք գոնվում էին կուլակների, տերտերների լծի տակ, (դպրոցների քանակը, աշխատանքի տնտեսությունը, ցածր աշխատավարձ, հիվանդանոցները, հասարակարան, թատրոն, կինո, ռադիո, ընտկարանային պայմանները և այլն)։

2-րդ ՌԱԺԻՆ

ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ, ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ 13 ՏԱՐՈՒՄ ՓՈԽԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏԿԵՐԸ

1. Կիսադաղութից Հայաստանը դարձել և ինդուստրիալ-ագրարային յերկիր, (թվեր արդյունաբերության արտադրանքի տեսակարար կշռի մասին—ժողովրդական տնտեսության արտադրանքի մեջ).

ա) ծանր արդյունաբերություն (նոր գործարաններ և նրանց ծավալը).

բ) էլեկտրիֆիկացիա (կայանների թիվը, կարողությունը).

գ) թեթև արդյունաբերություն (գործարանների թիվը, տեսակները, ծավալը)։

դ) տրանսպորտ (նորակառույցներ, նաև խճուղիներ, ավտոմոտորիզացիա).

ե) բանվոր դասակարգի աճը (թիվը)։

2. ԳՅՈՒՂԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ

ա) հողային հարցի լուծումը

բ) ցանքերի տարածության և բերքատվության աճումն ըստ կուլտուրաների (թվերը).

գ) գյուղի ինդուստրացումը և սոցիալիստական վերակառուցումը (թվեր ՄՏԿ, խորհրդատեսություններ

սրանց կարողությունը, կոլեկտիվության ամրացման և կուլտուրայի լիկվիդացիայի մասին).

ղ) կոլեկտիվանքի յնկամտի աճումը (թվերը):

3. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՃՈՒՄ Ե ՁԵՎՈՎ ԱԶԳԱՅԻՆ, ԻՄՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՄԲ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆ.

ա) դրագիտության տոկոսը.

բ) տարրական և միջնակարգ դպրոցների թիվը.

գ) ինստիտուտները պատրաստում են սոցիալիզմի կազմակերպիչ կադրեր (թվերը).

դ) տպագրություն, կինո, թատրոն (ձեռնարկների թիվը).

ե) մամուլ և գրականություն (գրքերի և լրագրների տիրաժը, թիվը, աճումը).

զ) առողջապահություն (հիվանդանոց, մասնագետներ, կուրորտ, հանգստյան տուն և այլն).

է) ընակ. շինարարություն.

ը) աշխատավարձի անվանի դիտարկման (թվերը):

Ցուցահանդեսը կազմակերպողը պետք է ամեն կերպ խուսափի ավյալները սոսկ թվերով լուսաբանելուց: Անհրաժեշտ է գերակշռություն տալ առանձնապես ցուցահանդեսի ավյալների պատկերային ձևին, այն ուղղորդելով եքսպոնատների, մոդելների յեղանակը, որոնք ավելի արտահայտիչ ու գրավիչ են դարձնում ցուցահանդեսը: Անհրաժեշտ է միաժամանակ յուրաքանչյուր բաժնում գնահատել ընկ. ԼԵՆԻՆԻ, ՍՏԱԼԻՆԻ, Կ. ՄԱՐՔՍԻ աշխատությունների, XVII համագումարի որոշումների վերցրած հատուկատասխան քաղվածքները, լոզունգները: Ցուցահանդեսին պետք է այնպիսի գեղագիտություն տալ, որ նա ավելի արտահայտիչ լինի, որ հեշտ լինի հնի և նորի համեմատությունը և այլն: Այնուհետև անհրաժեշտ է առանձնացնել հատուկ հերթապահ ընկերը, որը պիտի տանի բացատրա-

կան աշխատանք, կազմակերպի գրույց և պատասխանի ցուցահանդեսին վերաբերվող զանազան հարցերին և այլն։ Անկասկած գյուղական աշխատողները կամ կինոմեխանիկը ի վիճակի չեն լինի այդ ձևի և ծավալի ցուցահանդես կազմակերպելու, թեկուզ հենց նրա համար, որ ամեն մի գյուղում դժվար և ճարել նկարիչ չեն լինի համապատասխան տվյալներ և այլն։ Այս բանից յուրաքանչյուր, նման աշխատանք պիտի կատարի բաժանմունքի կուլտ աշխատողը, կամ շրջ քաղաքի վարիչը։ Նրանք հանդապատասխան տվյալներ կամ ստանում են մեզանից, կամ վերցնում են շրջգործկոմից և հանդապատասխան ուժերի միջոցով սկսում են ցուցահանդեսի ձևավորման աշխատանքները։ Բոլոր պլակատները, ֆոտոները, լոզունգները և այլն պիտի այնպիսի ձև ու ծավալ ունենան, որ հնարավոր լինի մի վայրից մի ուրիշ վայր փոխադրելու։ Բազմակողմանի ցուցահանդեսների կազմակերպումը սովորաբար կատարվում է նշանավոր տոների կապակցությամբ։ Այդ ձևի մասսայական աշխատանք պիտի անպայման կատարեն քաղաքային ստացիոնար կինոները, իսկ սկսումները ու գյուղերը կարող են կազմակերպել համամասությամբ փոքր ծավալի ցուցահանդես, որը զերծ ստանցիոնար լուսաբանում և տվյալ գյուղի, կամ ձեռնարկի նվաճումներն ու թերությունները։

ԿԻՆՈ ՍԵԱՆՍԻ ՄԻՋՈՑԻՆ ՏԱՐՎԵԼԻՔ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Կինո սեանսի միջոցին տարվելիք մասսայական աշխատանքը վոչ միայն լրացնում և ցուցադրման ակ դրին տարած աշխատանքները, այլև նկարում շոշափված խոցերն ավելի հասկանալի դարձնելու, նրա ներգործությունն ավելի ազդու և խորը դարձնելու

կարևոր միջոցն են բացատրական-մասնագիտական աշխատանքը ամբողջ դեպքում ամբողջությամբ պետք է ընթանա ցուցադրվող նկարի բովանդակությունից։

Կինո աշխատողը կամ բացատրական աշխատանքի համար առանձնացված ընկերը, նախորդը պիտի ուշադրությամբ դիտի նկարը, կամ կազմված լիբրետոյի միջոցով մանրամասն ծանոթանա նկարի բովանդակությանն հետ, այլապես միանգամայն հակառակ արդյունք կստանա ամենալավ բացատրությունը, վորը տրվում է առանց նախնական դիտումի։

Սեանսի միջոցին տարբերիք աշխատանքների ամենամասնագիտացված ձևը՝ դա մակագրությունների ընթերցումն ու մեկնաբանումն են։ Բայց այդ ձևն իր ազդեցությամբ չափազանց անհարմար է։ Այդ իսկ պատճառով, դրա հետ միասին, անհրաժեշտ է ցուցադրումը զուգընթաց տալ նաև համառոտակի բացատրական՝ նկարի բովանդակության շուրջը։ Բնականորեն բացատրականի բնույթը, շրջանակը պետք է ընթանան դիտողների զարգացման ընդհանուր մակարդակից։ Որինակ՝ յեթե հանդիսատեսները դիրապանցապես բավականաչափ հասունացած ինտելիգենտ մարդիկ են, ապա նրանց համար այդպիսի բացատրությունը միանգամայն ավելորդ է և ձանձրալի, այդպիսի դեպքում կարելի յե հրաժարվել բացատրությունից։

Պատմական, դիտական, տեխնիկական և մասնադիտական նկարներին անհրաժեշտ է զուգադիպել կինո-դասախոսությամբ։ Այդպիսի դեպքում նկարը ցուցադրումն ամբողջապես պետք է յենթարկվի լինի զեկուցման պլանին, վորպես ոժանդակ նյութ և ցուցադրվի զեկուցման պահանջին համապատասխան։

Այդ աշխատանքների մեջ անհրաժեշտ է լայնորեն ներգրավել տվյալ շրջանի, գյուղի ուսուցչության,

գյուղատնտեսին, բժշկին, տեխնիկին և մյուս կարևոր ուժերին։ Ինչպես կինո աշխատողները, նույնպես և շրջանի կուսակցական-խորհրդային կազմակերպությունները պետք է աշխատեն շրջիկ կինոյի հետ ուղարկել նաև համապատասխան ուժ՝ կինո մասսայական աշխատանքների—զեկուցումների համար։

ԼՈՒՍԱԹԵՐԹ

Կինո մասսայական աշխատանքներում առանձնակի կարևոր տեղ է գրավում լուսաթերթը։ Լուսաթերթերի միջոցով չափազանց հեշտանում է նկարի բովանդակությունը շաղկապել տվյալ գյուղի, ձեռնարկի աշխատանքների ընթացքի հետ, պատկերավոր կերպով և բազմակողմանիորեն լուսաբանել տեղական խնդիրները, հետևաբար աշխատավորության զգոնությունն ուժեղանալը մոբիլիզացիայի յենթարկել որևէ հրատապ խնդիրների շուրջը, խարազանել, մերկացնել դասակարգային թշնամուն և նրա գործակալներին։

Ինչպես են կազմակերպում այդ աշխատանքը։ Տվյալ գյուղի կուլտ բանակայիններները—լիազորները, նախորդք ծանոթանալով առաջիկայում ցուցադրվող նկարի բովանդակությանը, հավաքում են նույնանման նյութեր և լոզունգներ, դիագրամների, նկարների, մակագրությունների և կարիկատուրաների ձև տալով, խնամքով գրում են փչացած պլյոնկայի վրա և վորպես լրագիր ցուցադրում, կամ կինոյի սկզբին, կամ վերջում. ցանկալի յե վերջում, վորպեսզի շաղկապումն ավելի արդյունավետ լինի։

Ընդունենք, վոր նկարը ցույց է տալիս բավական հավաքն աշխատանքները։ Այդ դեպքում լուսաթերթը պետք է սկսել այսպես.—«Մենք տեսանք, թե ինչպես

պետք է պայքարել բամբակի բերքը հավաքելու համար։ Այժմ տեսնենք թե մեր կոլխոզն ինչպես է կատարում այդ աշխատանքը և ով ինչպես է պայքարում բամբակի հաջող բերքահավաքի համար։ Ովքեր են, որոնք խանգարում են բամբակի հավաքը և այլն։ Մասսայական աշխատանքի այս ձևի գործադրումը կատարվել է Ուրալում և ուրիշ վայրերում և փայլուն արդյունքներ է տվել։ Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է լայնորեն տարածել նաև այդ ձևերը։ Այդ ձևի կենսագործումը պիտի ձևավորվեն շրջանային կինո բաղանները, ոգեորագործելով շրջ. լրագրի, հողբաժնի ավյալները։ Կազմված լուսաթերթերը շրջիկի հետ ուղարկվում է գյուղերը։ Այդպիսի գեղջուկ լուսաթերթերի միջոցով լուսաբանվում են ոչ միայն մեկ գյուղի, այլ ամբողջ շրջանի աշխատանքների պատկերը։ Դա մի կարևոր միջոց է գրական գործի փոխանակման համար։

ՍԵԱՆՍԻՑ ՀԵՏՈ ՏԱՐՎԵԼԻՔ ԿԻՆՈ-ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Զբաղմունքների, դասախոսությունների և քաղմարտերի կազմակերպումով, մենք հանդիսատեսի մեջ միաժամանակ առաջացնում ենք մի շարք հարցեր, թե ընդհանուր բնույթի և թե իր շրջապատին վերաբերվող առարկա խնդիրների շուրջը։ Բնական է, որ նա անպայման պիտի շահագրգռվի, պարզելու առաջադրված խնդիրների ճշտությունը, ստանալու ճիշտ պատասխանը իրեն հուզող հարցերին, ստանալու իր վաղվա անելիքների մասին հստակ և գործնական ցուցումներ։ Կինո-դաշտխարակչական-պրոպագանդիստական աշխատանքներն ավելի զորեղ ներգործություն կունենան, հանդիսատեսին ավելի կհամախմբեն պրակտիկ խնդիր-

ների կենսագործման շուրջը միայն այն դեպքում, երբ հանրագումարի բերվեն սեռանսի սկզբին և միջոցին կատարված մասնայական աշխատանքները, եթե այդ աշխատանքները կիսորացվեն սեռանսի վերջում կազմակերպվելիք մի շարք մասնայական-գաստրարակչական աշխատանքներով։ Սեռանսի վերջում ձեռնարկվելիք աշխատանքները միաժամանակ պիտի նպատակ ունենան կազմակերպելու հանդիսատեսի ակտիվ վերաբերմունքը՝ հանդեպ կինոնկարի։ Հանդես բերելով դիտող հասարակության ակտիվ վերաբերմունքը ցուցադրվող նկարի շուրջը և լրջորեն հաշվի առնելով նրանց դիտողությունները, կինոմասսավիկը դրանով իսկ հնարավորություն կունենա պարզելու հասարակության կուլտուրական մակարդակը, նրա պահանջները, նրանցում տեղած տրամադրությունները, հուզող հարցերը և այլն, հետագայում ավելի նպատակահարմար ձևով կազմակերպելու իր աշխատանքները, մասսայի կուլտուրական պահանջներին ավելի համապատասխանող ռեպերտուար կազմելու։

Այժմ քննենք այդ աշխատանքների կազմակերպման մի քանի ձևերն ու նրանց բովանդակությունը։

Սեռանսի սկզբին կազմակերպվող քաղմարտները և վիկտորինաները ընդհանրապես հանդիսատեսի ուշադրությունն այս կամ այն չափով բևեռում են նկարում շոշափվող խնդիրների վրա։ Այդ լարվածությունը պահպանելու և ապա սեռանսի վերջում կազմակերպվող աշխատանքներին ակտիվ մասնակից դարձնելու համար, անհրաժեշտ է առաջադրված հարցերին տրված պատասխանների ճշտությունը լուսաբանել սեռանսի վերջում, միաժամանակ դնելով հանդիսատեսների քննադատությանը ցուցադրված նկարը։ Այդ աշխատանքների դեկավարությունը պետք է կատարի պատրաստված ըն-

կեր, (անապատման պետք է դնկավարի այն ընկերը, ով սկզբին տարել է ժառայական աշխատանքների դնկավարությունը)։ Ինդապատությունը պետք է սկսել պարզ ղրույցի ձևով և դնկավարը պետք է անապատման ղրույցը և յուրաքանչյուրը տանի վորոշ ուղղությամբ, լուծելու առաջադրված խնդիրները, շաղկապի տեղի խընդիրների հետ և յայտնելն լուսաբանի տեղական վիճակը, իսկ վերջում դնկավարը պետք է ամփոփի և յեզրակացություններ հանի։

Ղրույցի կամ դիսպուտի միջոցին անխուսափելիորեն կառաջանան այնպիսի հարցեր, վորոնց պատասխանը կարող է դնկավարը չդիտենալ։ Այդպիսի դեպքերում նա պարտավոր է հարցի պատասխանը հետաձգել։ Հանախ վորոշ ընկերներ դատում են այսպես.— «պատասխանիր վատահորին, թեկուզ՝ սխալ, վոր հեղինակություն չընկնես»։ Այն դեպքում, յերբ ինդապատությունը կազմակերպվում է առանց նախնական հարցերի առաջադրման, դնկավարը պարտավոր է նկարի հանդուցային խնդիրների շուրջը ներածական խոսք ասել, այդ խնդիրները ներառելն շաղկապելով տեղական հարցերի հետ։ Ներածականից հետո արդեն սկսվում է հանդիսականների յուրաքանչյուրը նկարի շուրջը։ Զարմանալի ցանկալի և նպատակահարմար է ինդապատությունը կազմակերպել անանից անմիջապես հետո, վորովհետև այդ միջոցին, ինչպես անանի սկզբում առաջադրված խնդիրները, նույնպես և նկարի թեղած ապավորությունները դեռ նոր թարմ են հանդիսականների ուղեղներում։

Ինդապատության միջոցին անկանգ հավաքվելու յեն մի շարք արժեքավոր նյութեր, դիտողություններ և առաջարկներ ինչպես նկարի, նույնպես և ամբող վայրի համապատասխան խնդիրների մասին։

Միանգամայն անհրաժեշտ է վոչ միայն սահմանափակվել այդ բոլորն ի մի ամփոփելով վերջին խոսքում, այլև համապատասխան գործնական աշխատանք ծավալել դիտողությունները և առաջարկները կենսագործելու ուղղությամբ։ Զբույցի ղեկավարը, մասնավորապես և հանդիսատեսների հետ միասին այդ բոլորը ձևակերպել և հանձնարարել համապատասխան կազմակերպություններին կատարելու։ Զափազանց նպատակահարմար է հենց նույն միջոցին աշխատանքներն այնպես կազմակերպել, վոր ինչպես առանձին աշխատողները, նույնպես և կոլտնտեսային, խորհրդատեսային առանձին բրիգադները, կամ ոդակները, վերջում կոնդրետ պարտականություն ստանձնեն իրենց աշխատանքների վերաբերյալ, վորպիսին պետք է ձևակերպել իրենց տարբերման պայմանագիր, վորի կիրառման վրա հսկում է կոլտնտեսության դիրեկցիան կամ այլ կազմակերպություն։

Հնարավոր է նաև կազմակերպել կոլեկտիվ ռեցենզիա։ Տվյալ դեպքում աշխատանքները պետք է տարվին նկարը բազմակողմանիորեն վերլուծելու, նրա դաղափարական կողմը կուսակցականորեն ճիշտ գնահատելու ուղղությամբ։ Մասսայական աշխատանքները ղեկավարողի անմիջական խնդիրը տվյալ դեպքում պետք է լինի ոժանդակել հանդիսատեսին ըմբռնելու կինո մատերիալի հանգուցային խնդիրները, լրիվ և ամբողջական դաղափար կազմելու ցուցադրվող նկարի մասին։ Դրա համար նա պարտավոր է ցուցադրման սկզբին 10—15 րոպեյով ներածական խոսք ասել նկարի հանգուցային խնդիրների շուրջը և տալ առաջադրել մի քանի հիմնական հարցեր, վորոնց շուրջը պետք է արտահայտվեն հանդիսատեսները։ Սեանսից հետո անպայման պետք է քացել մտքերի փոխանակություն

Դարձեալ և հաշվի առնել, ինչ նոր բան ավելց նկարը դիտողին, ինչը դուր չեկավ նրան ավելալ նկարում։ Այդ բոլորից հետո դեկավարն է մի չի ամփոփում արտահայտված կարծիքները, գրանցում դիտողությունները։ Այդ տեսակետից նկարի այդպիսինակ կոլեկտիվ դատաստանը խոշոր ոժանդակություն ցույց կտա կինո արտադրությանը։ Ինչպես կինոյի, նույնպես և ավյալ ձեռնարկի, դյուղի, կոլտնտեսության աշխատանքների մասին արված դիտողությունների կենսագործման, նրան աված ոգուտների մասին, անպայման կինո մասսայական աշխատողը պարտավոր է այս կամ այն ձևով տեղյակ պահել հանդիսատեսներին, հաշվետու դառնալ դիտողների առաջ։ Զանգվածից անհրաժեշտ է կինո մասսայական աշխատանքներում ոգտագործել մամուլը։ Կատարված և կատարվելիք մասսայական աշխատանքների մասին անհրաժեշտ և հանախակի հոդվածներ, լրագրական իմֆորմացիաներ տպագրել տեղական մամուլում։ Կոլեկտիվ ռեցենզիան, վորպես կազմակերպված հասարակական կարծիք, նույնպես պետք է տպագրել տեղական լրագրում։ Միաժամանակ անհրաժեշտ է լրագրի միջոցով հաշիվ տալ հասարակայնությանը՝ արված առաջարկների կենսագործման մասին։ Հաշվետվություն այդ ձևը ընդհանրապես մեծ ակտիվություն կատարելագործի հանդիսականի մեջ։ Եթե նա տեսնում է, վոր իր առաջարկները մտանում են խնամքով և չեն թողնում անհետևանք, ապա նա միլա անգամ ավելի ակտիվ մասնակցություն կունենա նկարների քննարկմանը։

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼ ԴԻՏՈՂԻՆ

Կինո աշխատանքների վորակի ցածրությունը պիտի բացատրել նաև նրանով, վոր դեռևս մեզ մոտ չի ստեղծված կազմակերպված հասարակայնություն

կինոյի շուրջը։ Մենք մինչև հիմա կանոնավոր չենք դրադվել դիտողի ուսումնասիրությամբ, նրա դիտողությունների, կարծիքների և գեղագիտական պահանջների հաշվառման խնդիրներով։ Իսկ այդ հաշվառումը կարևորագույն նշանակություն ունի ոչ միայն կինոսպասարկման կազմակերպման, այլ և կինո արտադրության համար։ Այդ դիտողությունների, առաջարկների միջոցով անպայման կինոստեղծագործական պերսոնալը հնարավորություն կունենա ուսումնական դիտող հասարակության գեղագիտական պահանջներին և դրան համապատասխան արտադրանք կատա։ Անկասկած դիտողի ուսումնասիրության ուղղությամբ նշված կինո մասսայական աշխատանքները բավականին հարուստ նյութ կարող են տալ, բայց դա ամենևին չի նշանակում, որ կինոմասսաժիկը հասկացիս չպիտի դրաղվի դիտողի բազմակողմանի ուսումնասիրության խնդրով և միայն պիտի բավականանա դիտարանների, դասախոսությունների, քարոզ մարտերի ոգով նյութերով։ Մենք պիտի լրջորեն ուսումնասիրենք դիտող հասարակությունը, հաշվի առնենք նրա պահանջները և այլն։

Դիտողի ուսումնասիրության մի քանի ձևեր գոյություն ունին։ Ամենանպատակահարմար ձևերից մեկը դա՝ անկետային ուսումնասիրությունն է։ Անկետայի միջոցով կարելի է մեծ թվով մարդ ընդգրկել և ստացված նյութերը հեշտ և մի հայտարարի բերել։ Դրա համար անկետան պիտի գրվի կարճ, հասկանալի, հարցերը պիտի դնել այնպես, որ լրացնողը կարողանա մի քանի խոսքով պատասխանել։ Պետք է անկետան բաժանել ձրի և ամբողջ ստորագրությունը։ Ապա մասսայական աշխատողը սնանսի սկզբին բացատրի անկետայի նպատակը և կոչ անի ակտիվ մասնակցելու աշխատանքներին։

Անկեղծորեն պիտի կազմված լինի մոտավորապես հետևյալ հարցերով.—

1. ազգանունը, անունը.

2. հասակը.

3. սոցիալական դրությունը (քանիսը, կոլտնտեսական, ծառայող, մենատնտես, այլք, և այլն—ընդգծել).

4. մասնագիտությունը.

5. կրթությունը.

6. ի՞նչ նկարներ և գիտել առաջներում.

7. ի՞նչ թերություններ ենք գիտել ավյալ նկարում.

8. ձեր կարծիքը ցուցադրման պրոցեսի մասին.

9. ձեր ցանկությունները՝

ա) նկարի մասին.

բ) ցուցադրման մասին.

գ) քաղաքաշինարարների մասին։

Հ-րդ և արժեքավոր ձևը դիտողի անհատական առանձնահատկությունը ընդգծվում հանդիսանում է «դիտողների գիրքը» կամ «դիտողների գնահատականների գիրք»-ը։ Այս ձևը, չնայած հասարակ է, ուրեմն՝ գործածվելիս բոլոր կինոնկարում, բայց ավելի արդյունավետն և գրանցվում դիտողի վերաբերմունքը դեպի նկարը, կամ կինո մոտայական աշխատանքը։ Դրա համար հարկավոր է աչքի ընկնող անգամ դնել մի ընդհանուր տեսք, մասին և համապատասխան լուսանկով հրավիրել դիտողին գրի առնելու իր տպավորությունները ու առաջարկությունները նկարի մասին։ «Դիտողի գիրքը» իր շուշափելի արդյունքները կտա միայն այն ժամանակ, երբ կինո կազմակերպությունները վաղ միայն հաշվի չեն առնում բոլոր արժեքավոր դիտողությունները, այլ և այն ժամանակ, երբ գործի կվերածվեն այդ առաջարկները և դիտողությունները։ Այդ ձևն ավելի արդյունավետ դարձնելու համար, հար-

կավոր և ինքնորմացիա տալ դիտողներին՝ առաջարկությունների կենսագործման ընթացքի մասին։

Այնուհետև հարկավոր է կինոներում ունենալ դիտողությունների ու առաջարկությունների հատուկ արկղներ, առաջինը՝ նկարը հավանողների և 2-րդը՝ չհավանողների համար — համապատասխան մակագրությամբ։

Դիտողի ուսումնասիրության կարևորագույն միջոց և պատի լրագիրը։ Լրագրի միջոցով անհրաժեշտ է լուսաբանել «դիտողի գրքի» առաջարկները, նրանց կենսագործման արդյունքները, առանձին ռեցենզիաներ և այլն։ Պատի լրագիրը միաժամանակ հնարավորություն է ընձեռում խորհրդային հասարակայնություն ստեղծելու կինոյի շուրջը և ստեղծելու մշտական ակտիվ։

Բացի նշված ձևերից գոյություն ունի մի շարք այլ ձևեր ևս. վերջում կանգ առնենք դիտողների կոնֆերանսների վրա և վերջացնենք։

Դիտող հասարակության կոլեկտիվ ուսումնասիրման ամենակարևոր միջոցը—դա դիտողների կոնֆերանսների կազմակերպումն է։ Դիտողների կոնֆերանսներում անհրաժեշտ է քննություն առարկա դարձնել վոչ միայն առանձին կինո նկարներ, այլ և մի շարք ընդհանուր կարգի խնդիրներ, ինչպիսիք են՝ սցենարիների քննարկումը, կինո խրոնիկալի հերթական խնդիրները, թեմատիկ պլանը, կինո-աշխատողի հաշվետու զեկուցումը, կինո մասսայական աշխատանքների խնդիրները և այլն։

Դասական չի կարող լինել, վոր այդ բոլոր աշխատանքները հաջողությամբ, առանց քաղաքական սխալների կատարելու համար, պետք է շրջանային կուսակցական, կոմսոմոլական կազմակերպությունները, Մ.Տ.Կ

քաղաքաժիններին ամենաակտիվ և ամենաշատն մասնակցություն ունենան, դեռ ավելին, անմիջականորեն ղեկավարեն այդ աշխատանքները։ Նշված կետն մասսայական աշխատանքների բոլոր ձևերը հնարավոր չէ, իհարկե, լրիվ շափով կիրառել թե գյուղում և թե քաղաքում։ Պետք է շեշտել, որ մասսայական աշխատանքի այս կամ այն ձևերի կիրառումը նախ և առաջ կախված է այն բանից, թե ինչպիսի ուժեր ունի տվյալ միացը, ապա՝ ինչպիսի պրոպագանդան մակարդակ ունի հանդիսատեսը և այլն։ Դրա համար էլ մասսայական աշխատանքի այս կամ այն ձևի ընտրությունը, որը պիտի թղթի նկարի բովանդակությունից, թողնում ենք մասսայական աշխատողի հայեցողությանը։ Դրա հետ միասին պետք է շեշտենք, որ նկարի բովանդակության համառոտակի լուսաբանումը, մակարդակությունների ընթերցումը, անհատական, խմբակային ուղիությունը, թեթև խնդիրների շուրջը քաղ-մարտի, վիկտորինայի կազմակերպումը—սեռական վերջում տպավորությունների հաշվառումը և այլն հնարավոր և անհրաժեշտ է կենսագործել գերազանցապես գյուղում և քանվորական ակումբներում։ Միանգամայն հնարավոր է այդ միջոցներում կենսագործել նաև գիտողների ուսումնասիրության բոլոր ձևերը։

Քաղաքային կենտրոններում պետք է խուսափել բովանդակության բացատրությունից, լայնորեն կիրառել դասախոսությունների, գիտունների, կոլեկտիվ ռեցիտացիաների, ծավալուն ցուցահանդեսների սիստեմը և այլն։ Այս բոլորն ամենևին չի նշանակում, որ գյուղում պիտի հրաժարվել, ասենք, դասախոսությունների ձևից։ Ընդհակառակը, գիտական և ագրոտեխնիկական նկարները պիտի շրջապատվեն դասախոսությամբ։ Մի քանի խոսք հատկապես կոմերիտմիության մասնակ-

ցությանն մասին Հայաստանի յոթ, վոր կոմունիստական հեղափոխության առաջամարտիկն են։ Այդ իսկ պատճառով նա պիտի լինի կինո մասսայական աշխատողի առաջին շարքերում։ Հենց այդ դերից յելնելով, Հայաստանի կոմունիստական Կենտրոնական Կոմիտեն վորոշել է կինո մասսայական աշխատանքների շնչությունը դնել կոմունիստական միության շրջանային կազմակերպությունների վրա։ Ահա այդ վորոշումը.—«Առաջարկել շրջկոմներին և բջիջներին վերցնել շրջիկ կինոների շնչությունը, վորը կոնկրետ պետք է արտահայտվի նրանով, վոր շրջիկ կինոն գյուղ գնալիս բջիջը պարտավոր է կազմակերպել նրա շուրջը ընդլուսաշխատանքներ, ստեղծել հարմարություններ մեխանիկի համար (անուն, դիշերելու տեղ) և կատարության վերոգման հիման վրա, տեղական խորհրդային որգաններին հետ կազմակերպի շրջիկ կինոյի փոխադրման գործը մի գյուղից մյուս գյուղը։ Մենք համոզված ենք, վոր այս բայլշևիկյան վորոշումը շրջանային և տեղական կոմսոմոլի կազմակերպություններն իրական գործ կդարձնեն և վերջ կդնեն այն խայտառակ վերաբերմունքին, վորը հաճախ հանդիպում է գալիս դեպի կինո մեխանիկը։

ՉԱԽՉԱԽԵԼ ՈՊՈՐՏՅՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԼՐՋՈՐԵՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎԵԼ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ

Այդ ամբողջը ցույց է տալիս, վոր կինո մասսայական աշխատանքները կազմակերպող ընկերոջ առաջ դրված են բազմակողմանի, խիստ կարևոր և պատասխանատու խնդիրներ։ Կինո մասսայիկը, դա իդեոլոգիական ֆրոնտի մարտիկ և հանդիսանում է։ Այս բանը պիտի գիտակցել։ Անհրաժեշտ է կրկին ընդգծել, վոր

Հանդարտվելիս աշխատանքները պահանջում են, որ կինը ամբողջովին լրջորեն պատրաստվի, խորանա խնդիրների մեջ և նախապատրաստի իր ուժերը։ Հաստատակամությունն ու անձնուիրությունն այստեղ խիստ զոհաբերվող են և կարող են լուրջ քաղաքական սխալներին հանգեցնել և ոչնչացնել ամբողջ գործը։

Կինը մասնակցում աշխատանքներին խոշոր չափով խանգարում է բավականաչափ տարածված միտքը զոհաբերվող հանգամանքը, որ այդ աշխատանքները թերագնահատում են, չեն կարողանում լրջորեն դնահատել կինդի և նրա շուրջը ծավալվող մասնակցական աշխատանքների խոշորագույն քաղաքական, դաստիարակչական նշանակությունը։ 2-րդ հրնդամյակի խնդիրներին կինատարածման ապարդյուն։ Որտեղ հնարավոր խոշոր արդյունք և նաև կինը կազմակերպությունների բավականաչափ արտատացած նեղմանական-տնտեսական արտադրությունները։ Հատ. Կինտերնը իր 33 թ. մայիսի 7-ի վորոշման մեջ այդ մասին գրել է, «Կինտերնիկացիան այդ բոլոր թերությունների արդյունք են այն բանի, որ կինտ կազմակերպությունները դեռևս ապատարկուում դիտում են որպես անջատվող և անբնական մի դարձ, իսկ մի շարք կազմակերպությունների (տեղական գործիքները) կինտ աշխատանքը համարում են կիսատարբերգործական անոգամանք—ձրի ապատարկուում։ Կասկածից վեր է, որ դեռևս կինտ ապատարկման բարելավումը, կինտ մասնակցական աշխատանքների ծավալումը հնարավոր է միայն այն դեպքում, երբ կուսակցական կազմակերպությունները վճռական պայքարով հիշեցնեն այդ ապրանքատնտեսական արտադրությունները և անհրաժեշտ հասարակայնություն կատարեն կինտի շուրջը։

Գայքաբելով այդորինակ տրամադրություններին և պրակտիկայի դեմ, կուստակցական, կոմերիտական կազմակերպություններին, Մ. Տ. Կ. քաղբաժիններին, կինո աշխատողների խնդիրը պիտի լինի լայնորեն ոգտագործել կինոն «որպես դյուղում ամենորյա քաղաքական-կուլտուրական աշխատանքների կազմակերպման գործիք, որպես լավագույն միջոց միլիոնավոր կոլտնտեսականներին և սովխոզներին սովորեցնելու սոցիալիստական խոշոր հողագործության ձևերը, դյուղատնտեսական բարդ մեքենաների խնամքի կազմակերպումն ու ոգտագործումը և ագրոտեխնիկական դյուղատնտեսության մեջ կիրառելու գործումը (Կենտկոմի նույն վորոշումից)։ Իսկ այդ նպատակի կենսագործման լավագույն ուղին՝ կինո-մասսայական աշխատանքների ծավալումն է։

ՀԱՅ ԳՐԱԾԻՔ ՀԱՆՐԱՊԵՏԱՐԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2
ԱԿԱԴԵՄԻԱ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0038851

[084] ԳԻՆԸ 40 ԿՈՊ.

А I/3887

А. КЗРАКОСЯН

Массовая кино работа

Сельхозгиз 1934 Эривань